թեամբ մի քանի տաճիկ սպաների, զարդարուած կարմիր լաթերով։ Կարսի հայ կոմունիստներն էին դրանք. պատում էին հանրակացարանները և իրենց թշնամիներին մատնում տաճիկներին։ Ցեղկոմների անդամներ էին։ Այնպէս էին հաւատացրել սրանց տաճիկ սպաները, որ իբր թէ Կարսը պիտի յանձնեն բոլշևիկեան իշխանութեան։ Եւ ամէն կերպ փայփայում էին կոմունիստ տականքներին. փոխարէնը սրանք մատնութիւններ էի անում և ցոյց տալիս պահեստների տեղերը և անհրաժեշտ տեղեկութիւններ էին տալիս հայ զօրքի և երկրի վերաբերեալ»։

Իսկ Բագուի հայերէն «Կոմունիստ»-ը (№ 42) հետևեալ ձևով է նկարագրում թիւրքերի ընթացքը Կարսում.

«Հոկտ. 30-ին տաճկական զօրքերի առաջապահ մասերը չհանդիպելով ոչ մի դիմադրութեան հայկական զօրամասերի կողմից՝ դրաւեցին Կարսը։ Մինչև թիւրքական զօրքերի մտնելը, հայկական զօրքերը խորը համոզուած էին, որ Կարսի վրա յարձակուող զօրքերը բոլշևիկներն են, որի պատճառով և նրանք դիմադրութիւն ցոյց չտուին տաճիկներին։ Այդպիսի կարծիքի էր և Կարս քաղաքի աշխատաւոր ժողովուրդը, որը բացարձակապէս համոզուած էր, որ կարմիր դրօշակի տակ, յարձակւում է կարմիր Տաճկաստանի յեղափոխական բանակը։ Բայց քաղաք թափուած այդ զօրքերը չինայեցին ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին և ո՛չ էլ ծերերին։ Հինգ օրւայ ընթացքին արիւնռուշտ զինուորները և քիւրդերը խաղաղ ժողովրդի դէմին գործադրեցին իրենց բոլոր դաղանութիւնները, որոնք վեր են մարդու երևակայութիւնից։ Սպանում էին բացառապէս հայերին։ Թալանում էին ամենքին անխտիր։

Չէին խնայում նոյնիսկ կոմունիստներին, որոնք իրենց կոմունիստ լինելը ապացուցանող վկայականներ էին ներկայացնում։ Տաճկական դաղանութիւններին զոհ գնացին Կարսում միմիայն 6,000 հայեր։

Սարսափելի կոտորածներին յաջորդեցին խմբական ձերբակալութիւններ հայերի մէջ։ Ոտքից գլուխ մերկացնելով նրանց հարիւրներով ուղարկում էին Կարին և Սարըղամիշ աշխատելու։ Ուղարկուածները ցրտահար էին լինում և մեռնում քաղցից ու տանջանքից։

Միևնոյն ժամանակ սկսել էր թուրք դաղթականների շարժումը դէպի Կարսի շրջանը։ Տեսողները սարսափով պատմում էին, թէ ինչպէս բազմահազար ամբոխը՝ ծերեր, կանայք, երեխաներ այդ ցրտին շարժւում էին դէպի Սարըղամիշ ու Կարս օր առաջ տեղաւորուելու փախած հայերի գիւղերում և տներում։

Կարսի շրջանը դատարկուած էր արդէն հայերից. Կարս քաղաքը նոյնպէս։ Բեմալականների համար ստեղծուել էր հնարաւորութիւն իրենց ծրագրի մի մասը իրագործելու։ Տաճկական հրամանատարութիւնը աշխատում էր Կարսի շրջանը թրքացնել, որպէսզի հին կառավարութեան հետ կնքած պայմանի համաձայն, կազմուելիք հանրաքւէն յօդուտ իրեն վճռի, իսկ առաջին խորհրդաժողովին կարենայ յայտարարել, որ Կարսի շրջանը թրքաբնակ է»։

Կարսի դրաւման յաջորդ օրը, Բեազիմ Կարաբեքիրը մի կոչ ուղղեց քաղաքի և շրջանի հայ ազգաբնակութեան, որի մէջ պատերազմի ամբողջ պատասխանատուութիւնը բարդում էր «դաշնակների» վրա և իրեն ներկայացնում էր իբրև քրիստոնէութեան պաշտպան. ապա պահանջում էր, որ իշխանութեան յանձնուեն հայերի մօտ գտնուող դէնքն ու ռազմամթերքը, սպաներին և «ամէն տեսակ գործակալներին ու լրտեսներին»։